

## **Զառ գյուղ ,Վարչական ղեկավար՝ Լևոն Խաչատրյան**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԶԱՌ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Գյուղի ներկայիս անվանումը** - Զառ

**Գյուղի պատմական անվանումները** - Ծառ

**Գյուղի հիմնադրման ժամանակաշրջանը** - քարե դար  
**սահմանակից է** - Սևաբերդ, Գեղաշեն, Ակունք

**Գյուղի մակերեսը** - 7514.10 հա

**Հեռավորությունը մայրաքաղաքից** - 25կմ

**Բնակչության թիվը** - 1504

**Բնակչության կազմը** - հայեր

**Օգտակար հանածոներ** - չկա

**Կրթական հաստատություններ** - միջնակարգ դպրոց

**Մշակութային հաստատություններ** - մշակույթի տուն

**Մարզական հաստատություններ** - չկա

**Արտադրական ձեռնարկություններ** - չկա

**Բնակչության հիմնական զբաղմունքը** - անասնապահություն, հողագործություն

**Հոգևոր կառույցներ** - Սբ.Գր.Լուսավորիչ եկեղեցի/2002թ./, Սբ. Կարապետ եկեղեցի/19-րդ դար/

**Պատմամշակութային հուշարձաններ** - Ամրոց <<Բերդի գլուխ>> /Ք.ա 2-1-ին հազ./, Գերեզմանոց /9-19-րդ դդ./, Գերեզմանոց/17-19-րդ դդ./, Գյուղատեղի <<Եղուշ>>/15-17-րդ դդ./, Գյուղատեղի <<Ձիթխած>>, գերեզմանոց, խաչքարեր /10-16-րդ դդ./, Գյուղատեղի <<Խարաբեք>>, քարայր-կացարան /միջնադար./, Հուշարձան ԵԱԶ/1973թ./, Ջրաղաց /19-րդ դ./, Քարայր-կացարան /Քարի դար-միջնադար/, Ամրոց-բնակատեղի /Ք.ա 2-1-ին հազ./, Բնակատեղի, դամբարանադաշտ/Ք.ա 2-1-ին հազ./, Բնակատեղի /Ք.ա 2-1-ին հազ./, Դամբարանադաշտ /Ք.ա 2-1-ին հազ./, Գյուղատեղի / միջնադար/, Գյուղատեղի <<Յայջի>>, գերեզմանոց, խաչքարեր /10-18-րդ դդ./, Հուշարձան 2-րդ աշխարհամարտում զոհվածների/1972թ./

**Գյուղի մասին գրքի առկայություն** - չկա

### **ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Կոտայքի մարզի Զառ Գյուղը հին բնակավայր է: Հիմնվել է շատ վաղ ժամանակներում, վերաբնակեցվել է 1826-27թթ-ին: Համայնքը գտնվում է Հատիս լեռան հարավ-արևելյան մասում: Համայնքը հիմնադրման պահին ընդգրկված է եղել Աբովյանի շրջանի վարչական տարածքում: Հեռավորությունը քաղաքամայր Երևանից կազմում է 25կմ, մարզկենտրոնից՝ 42կմ: Ծովի մակարդակից միջին բարձրությունը կազմում է 1650-1930մ: Բնակլիմայական պայմանները լեռնային են: Տեղումների առատությամբ այնքան էլ աչքի չի ընկնում, ամառները շոգ են, ձմեռները՝ խիստ, լինում են նաև սառնամանիքներ:

Զառ **Գյուղի** բնակչության մեծամասնությունը նախկինում վերաբնակեցվել են Արևմտյան Հայաստանից:

Զառը սկսած քարե դարից, այսինքն՝ սկսած մեզանից մի քանի հազար տարի առաջ մինչ մեր օրերը ,մշտապես բնակեցված է եղել: Ներկայիս բնակչության մեծ մասը Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներից են գաղթվել՝ Մուշից Վանից, Թեհրանից՝ 1820թ-ին:

Զառ բառացի նշանակում է ոսկի, թանկարժեք քար. գիտնականների վերջին տվյալներով անունն առաջացել է Այր բառից, որը նշանակում է և տղամարդ ,և քարանձավ:

2003թ-ին ՀՀ կառավարության. կողմից հաստատված, մշակութային նախարարության գործակալության կողմից հաշվառված են 91 հուշարձաններ, որից 73-ը ունեն խիստ կարևոր հանրապետական նշանակություն: Գյուղում և նրա շրջանակներում կան բնակատեղիներ որոնցից՝

1. բնակատեղիներ 11 հատ. 2-1 հազարամյակի
2. բերդ-ամրոցներ 17 հատ .3-1 հազարամյակի
3. քարեդարյան կայաններ 11հատ (քարե դար)
4. ժայռապատկերներ 19 հատ. 5-2 հազարամյակի
5. խաչքարեր 26 հատ. 9-17 դարեր
6. եկեղեցի 3 հատ .1ը 10-11դար.1-10դար.3.կառուցվել է եկեղեցի 2002թ-ին բարերարների կողմից 1700 տարվա կապակցությամբ
7. մատուռ 2 հատ .7-16 դդ.
8. քարանձավ կաթսայատներ (քարե դար)10հազ.տարի առաջ
9. ջրամբար 2 հատ 2-1-ին հազարամյակ: